

զիս. այս Աստուած իմ, Աստուած իմ...: (Հայ հիւանդապահուհին ընդմիջելով այստեղ բուրք յիսնապետի խօսքերը, կը յայտնէ թէ հիւանդը սկսած էր դողալ եւ հեկեկալ...):

Հոգեկան այս անտանելի տառապանիները ստիպեցին զիս որ հեռանայի ատեն մը Ուրֆայէն: Փոխադրուեցայ Հալէպ, սակայն, աւա՞ղ, հոն ալ Զօհրապի աչքերը հետապնդեցին ու հալածեցին զիս: Երկար ատենէ ի վեր կորսնցուցած էի ժունս ու հանգիստ: Գիշերները, մուբը կոխելուն պէս, Զօհրապի աչքերը կը տնկուէին առջեւս... եւ կը յիշէի Զօհրապի վերջին խօսքերը. «Ճիսնապետ, կեանքիդ մինչեւ վերջը ժունս եւ հանգիստ պիտի չունենաս եւ պիտի տառապիս»:

Կրկին խնդրեցի որ զիս հեռու տեղ մը փոխադրէին: Ելայ երուսաղէմ, բայց ինձի հետ եկան նաեւ Զօհրապի աչքերը: Հալ ու մաշ եղայ. ախորժակս կորսնցուցի. տեւական դող ու սարսուռ: Սարսափելի գիշերէ մը վերջ,

«Լոյս» Ապրիլ 2002

## ՀՈՎՈՒԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅՈՑ

**ԱՌԱՋԻՆ.-** Ուր որ ալ ըլլաս, ի՞նչտեղ ալ գտնուիս, մի՛ մոռնար, յիշէ եւ ամուր կառչէ հայրենի սրբազն հողիդ, բազմադարեան մայրենի եկեղեցւոյդ, հոյակապ լեզուիդ եւ ազգային աւանդութիւններուդ, որոնք ցարդ խարիսխն եղան ժու փրկութեանդ, ասկէց վերջն ալ հիմը պիտի ըլլան ժու գոյութեանդ:

**ԵՐԿՐՈՐԴ.-** Գաղթավայրերուդ մէջ ուժ տուր նոր հայ եկեղեցիներու եւ հայ դպրոցներու կառուցման, իբր ցեղիդ պահպանութեան երկու գլխաւոր

առտուն այլեւս անկողնէս չկրցայ ելլել. զիս փոխադրեցին հոս՝ հիւանդանց: Բժաւոր տենդէ վարակուած էի: Երեք օրէ ի վեր, հոգեվարքի մէջ եմ. բայց կրկին չի բողոք զիս Զօհրապի աչքը. ա՛հ գոնէ հանգիստ հոգեվարք մը կը ցանկամ, բո՞յր, օգոնէ ինձ, ումայ մը բոյն բեր, մեռնիմ, ազատիմ, Զօհրապի վրէժը բող լուծուի: Ահաւասիկ խոստովանեցայ ժեզի, ես ոճրագործ մըն եմ, ես անիին մարդասպան մը, բե՛ր, բե՛ր, ումայ մը բոյն բեր... ալ չեմ կրնար դիմանալ... ուժասպան եմ, կուրծքս սեղմուած է, շունչ չեմ կրնար առնել, աչքերս սկսան մքագնիլ...

ԱՇ, ժիշ մը հանդարտեցայ հիմա... սկսայ շունչ առնել... աչքերս բացուեցան... ահաւասիկ Գրիգոր Զօհրապի աչքերը:

\* \* \*

Ասոնք եղած են վերջին խօսքերը մարդասպան յիսնապետին, կամաց կամաց մարած է ձայնը, վերջին հոնդիւն մը, որմէ վերջ փակուած են աչքերը:

× ×

ազդակները: Տուներու մէջ մի մոռնար խօսելու մայրենի հիասմանչ լեզուդ եւ սորվեցուր զաւակներուդ ալ, որպէս զի չօտարանան, չայլասերին եւ չկորսուին:

**ԵՐՐՈՐԴ.-** Մտքով, հոգիով եւ մարմնով ապրէ մաքուր, առողջ, ծուժկալ եւ պարզ: Եղիր ինայող, որպէս զի երբ 5-6 տարիէն վերաշննուող Մայր Հայրենիի դառնալու աւետարեր օրն հնչէ, բարոյական, մարմնական եւ նիւթական դրամագլխով երթաս Հայաստան, իբր նոր ու բարմ ուժ մը հայրենիքի շէնքին վրայ աւելցնելու ժու հետդ տարած

կարողութիւններդ եւ ոչ թէ բեռ ըլլաս հայրենիքիդ:

**ԶՈՐԾՈՐԴ.-** Նիւթապէս եւ բարյապէս փութա' օգնել Մայր Հայրենիքիդ վերաշինութեան սրբազն գործին, անդամակցելով հետզհետէ կազմակերպուող ՀՕԿերուն, առանց կուսակցական եւ յարանուանական խորութեան, բանի որ հասարակաց մեր հայրենիքն է, գնուած հայ ցեղին համարեա կէսին ահաւոր զոհարերութեամբ: Քու թշնամիդ բեզ անխնայ կոտորեց, եւ կոտորած ատեն խտիր չդրաւ դասակարգի, գաղափարի, կուսակցական եւ յարանուանական շերտաւորումներու. դուն ինչո՞ւ խտիր կը դնես: Մի՛ նայիր թէ վերաշինուող Մայր Հայրենիքդ ի՞նչ ոէժիմ ունի եւ ո՞ր կուսակցութիւնն է ղեկավար. բանի որ՝ հայ մարդիկ են, սիրէ, պաշտպանէ՛, զօրացո՞ր, զի զանազան վարչութիւնները կու գան ու կ'երթան, բայց հայ հայրենիքն ու հայ ժողովուրդը մնաց ու պիտի մնայ յաւիտեան:

**ՀԻՆԳԵՐՈՐԴ.-** Քանի օտարութեան մէջ կ'ապրիֆ՝ եղրայրական ձեռք կակառեցէ՛, իրարու բեռ թերեւցուցէ՛, իրարու արցունիք սրբեցէ՛, զի ամէնին ալ տառապանիքի, ցաւի ընկերներ է՛, իսկ վշտի ընկերներ իրար չեն մոռնար երրիք:

**ՎԵՅԵՐՈՐԴ.-** Ո՞ր երկրին մէջ ալ որ գտնուիս, բու վայելած ասպանչականութեանդ եւ հիւրասիրութեանդ համար շնորհապարտ եղիր. բու այս երախտագիտութեանդ մեծագոյն եւ գործնական ապացոյցը տուած պիտի ըլլաս, եթէ ապրած երկրիդ օրէնքներուն հանդէպ անկեղծ ու անվերապահ յարգանիք ու ակնածանիք ունենաս:

Զանա՛ սորվիլ ապրած երկրիդ լեզուն, եղիր բարեկիրք եւ մի՛ մոռնար որ Եւրոպացիներէն շատ առաջ բաղաքակիրք եւ պատմական փառաւոր անցեալ ունեցող 4000 տարուան ժողովուրդի մը զաւակն ես: Միշտ բարձր պահէ ցեղիդ պատւոյ դրօշը, եթէ ստուգիւ մաքուր եւ ազնիւ հայ արիւն ունիս:

**ԵՕԹՆԵՐՈՐԴ.-** Եղիր չափաւոր բու բոլոր զգացումներուդ, խօսիդ եւ գործիդ մէջ, եղիր զաղտնապահ բու ազգային կամ անձնական ծրագիրներուդ մէջ: Հեռու կեցիր արկածախնդրական ամէն շարժումներէ: Քաղաքական յայտնի կամ զաղտնի խաղերու դաւակից եւ գործիդ մի ըլլար: Ա՛լ կը բաւէ որքան խարուեցար: Զգոյշ եւ հեռատես եղիր. զի չես գիտեր թէ վաղն ի՞նչ նոր չար անակնկալ կը բերէ բեզի: Քանի որ եիւր ես, հիւրի պէս վարուէ:

Յիշէ որ, մինչեւ մեր դպրոցական աշակերտները, բաղաքականութեամբ զբաղելնուս համար այս թափառական վիճակին հասանի, վրայ տալով եւ հայրենիք եւ մեր ազգին կէսն եւ հարստութիւն եւ ամէն ինչ:

**ՈՒԹԵՐՈՐԴ.-** Յիշէ եւ պահէ հայ ընտանեկան աւանդական սրբութիւննիմի՛ մոռնար որ ընտանիքներէ կազմուած են ազգերն. եթէ ընտանիքին հիմը զօրաւոր է, ազգն եւս զօրաւոր կ'ըլլայ: Զանա ամուսանալ ցեղակից օրիորդներու հետ, բազմածնութեամբ լեցուր կէս առ կէս կոտորակուած ցեղիդ պակասը, խորապէս համոզուած որ ինչպէս ամէն ազգերու մէջ, նոյնպէս Հայոց համար ալ օրինաւոր ամուսնութեամբ ընտանիք կազմելն ու բազմածնութիւնն մեր ազգային բաղաքականութեան հիմը պէտք է ըլլայ:

**ԻՆՆԵՐՈՐԴ.-** Եւրոպայի ցան ու ցրիւ 90.000 ժողովուրդին կէսէն աւելին կ'ապրին Ֆրանսայի մէջ, ուր է նաև եւրոպայի Հայոց Առաջնորդարանիստ կեդրոնն:

Ազնիւ Ֆրանսա, հաւատարիմ իր քաջմադարեան ասպետական աւանդութիւններուն, աւելի քան 50.000 ցեղակիցներ հիւրընկալեց իր պտղաբեր եւ արեւալից երկրին մէջ, երբ եւրոպայի քաղաքակիրք շատ երկիրներ իրենց դոներն ամրապէս փակեցին մեր առջեւ։ Մի՛ մոռնար այս ազնիւ հիւրասիրութիւնը, սորվէ՛ իր քաղցր լեզուն, որ միջազգային լեզու է դարերէ ի վեր. առիթէն օգտուէ՛ իւրացնելու իր հոյակապ եւ ոսկիրայ քաղաքակրթութիւնն եւ սիրէ Ֆրանսան, յիշելով որ մարդկային խտէալներու, ազնիւին, բարիին, գեղեցիկին դասական երկրն է։ Շատ քան կրնաս ուսանիլ եւ հետդ օր մը Հայաստան տանիլ Ֆրանսական քաղաքակրթութեան քաջմազան եւ զարմանազան փշրանքները, եւ անով նոր քոիչք տալ Մայր Հայրենիքիդ վերածննդեան մեղուազան աշխատանքներուն։

**ՏԱՄՆԵՐՈՐԴ.-** Ոտքի՝ կանգնէ, ա՛լ ժամն հասաւ, ազգերու մեծ ընտանիքին մէջ դուն ալ քաղաքական ազգ մը եղար,

ցոյց տուր թէ ազգերու պատմութեան մէջ դունուրեի տեսնուած անցեալ ազգային դժբախտութիւններէ հրահանգիչ դասեր գիտցած եւ առնել։ Ուստի յետ այսու քու հզօր անհատակութիւնդ յարմարցուր եւ գործածէ յօգուտ հաւաքականութեանդ Անձնավստահութեամբ միշտ յառաջ նալէ։ Ես հիացող մըն եմ ստեղծագործ ու շինարար աշխատանքիդ ու ցեղային անընկելի տոկունութեանդ. անցեալ պատմութիւնդ ասոր վկայ. օ՞ն վաղուան պատմութիւնդ ալ թող վկայ ըլլայ ասոր։

Իսկ դարերէ ի վեր այժմ մեզ ներկայացող այս մեծ պատեհութիւնն եւս չգիտնաս օգտագործել իրը քաղաքական հասունութիւն ունեցող ժողովուրդ, պատմական համաշխարհային յեղաշրջման այս օրերուն, դուն ձեռքովդ իսչ մը քաշած պիտի ըլլաս քու 4000 տարուան պատմութեանդ վկայ, եւ պատասխանատու մնաս ե՛ւ Աստուծոյ ե՛ւ ապագայ հայ բոլոր սերունդներուն առջեւ։

Վախցի՛ր պատմութեան անաչառ դատաստանէն եւ ապագայ հայ սերունդներու ահաւոր անժէֆէն։

Ներկայացուցիչ  
Վեհափառ Հայրապետին Ամենայն Հայոց  
եւ Պատուիրակ Մայր Աբոռոյ  
գրիգորիս եՊիՍկ. ՊԱԼԱՔԵԱՆ